

թէ՛ ինքնուրոյն եւ թէ՛ թարգմանական: Նրան հռչակ տուողը եղել է առաւելապէս իր բանաստեղծութիւնների ժողովածուն, որ առաջին տպագրութեամբ լոյս է տեսել 1851 թրւականին՝ «Միրզա Շաֆիի երգերը» (Lieder Mirza Schaffis) վերնագրով:

Յոյց տալու համար, թէ 19-րդ դարու երկրորդ կէսին եւ դեռ մինչեւ օրս էլ ո՛րչափ մեծ ժողովրդականութիւն են վայելում Բողենշտէլտի բանաստեղծութիւնները Գերմանիայում, բաւական է յիշատակել այն փաստը, որ շարունակ, ամէն տարի, նորանոր տպագրութիւնների են արժանանում նրանք: Վերջին տպագրութիւնը 264-րդն է կարծեմ, գուցէ աւելի՛ նորերն էլ կան: Չնայած ուրեմն որ 34 տարիներ են անցել արդէն Բողենշտէլտի մահից յետոյ, դեռ այսօր էլ Գերմանիայի գրականագէտ ու գրասէր հասարակութեան համար ծանօթ ու սիրուած անուն է Միրզա Շաֆին: Ի դէպ՝ այս վերջինը Բ.-ի ծածկանունն է թէեւ, բայց նա փոխ է առնուած իրականութեան մէջ ապրած մի ուրիշ անձից:

Միրզա Շաֆի է կոչուելիս եղել Բ.-ի թաթարերէնի (կովկասեան թուրքերէնի) ուսուցիչը Թիֆլիսում, որին նա շատ է յիշում իր աշխատութիւններում եւ «Գանձակի իմաստունը» անուանում: Այդ Գանձակեցի թաթարից է սովորել Բ. նաեւ շատ բաներ՝ առհասարակ Կովկասի ու Արեւելքի ժողովուրդների կենցաղավարութեան ու բանահիւսութեան մասին: Հայրենիք վերադառնալով էլ՝ իր բանաստեղծական երկերը նա այդ, Միրզա Շաֆի անունով է հրատարակել:

Այդ բոլոր բանաստեղծութեանց հիմնական երանգը արեւելեան է, որով եւ նրանք իրենց առանձնայատուկ տեղն են գրաւել Գերման նոր գրականութեան մէջ:

Բանաստեղծական ճիւղին են պատկանում նաեւ Բ.-ի մի քանի քարգմանութիւնները պարսկական գրականութիւնից, այն է՝ Հաֆիզի եւ մանաւանդ Օմար Խայամի թարգմանութիւնները: Օմար Խայամին գերմանացողը, նրան այս երկրի ընթերցող լայն հասարակութեանը ծանօթացնողը եւ սիրելի դարձնողը եղել է Բողենշտէլտ, իր թարգմանութեանը կցելով նաեւ մի ներհուն առաջաբան:

Այդ տեսակէտից եւս եզական է եղած Բողենշտէլտի դերը:

Այնուհետեւ, նա մի շարք քննադատութիւններ է նուիրել ռուսական գրականութեան մի քանի ականաւոր դէմքերի՝ Պուշկինի, Լերմոնտովի, Տուրգենեւի եւ այլոց ստեղծագործութեանց: Նրա ուշագրութիւնից է վերաբերում Ուկրայնական ժողովրդական հարուստ բանահիւսութիւնը:

Ապա, Բողենշտէլտ ժամանակին համարուել է անգլիական գրականութեան եւ մասնաւորապէս Շեքսպիրի ամենահմուտ մասնագէտներից մէկը: Այսպէս, անգլիական եւ սլաւոն գրականութեանց դանազան խնդիրներին են վերաբերում նրա «Արեւելքից եւ Արեւմուտքից» (Aus Ost und West) հատորը, ուր ամփոփուած են Բ.-ի համալսարանական մի շարք դասախօսութիւնները:

Բողենշտէլտ ունի նաեւ բազմաթիւ ուրիշ աշխատութիւններ:

Գոհանանք այստեղ յիշատակելով հետեւեալները, չորսը, որոնք յատկապէս մեր երկրի ու Անդրկովկասի ուսումնասիրութեան համար կարեւոր աղբիւրներ են եւ որոնք բնականաբար նկատի են առնուած ներկայ յօդուածը կազմելու միջոցին:

Ահա նրանք.—

1) «Կովկասի ժողովուրդները» (Die Voelker des Kaukasus) վերնագրով մեծահատոր (572 էջ), երկու մասից բաղկացած աշխատութիւնը՝ լոյս տեսած 1848-ին (Ֆրանկֆուրտում) .

2) «Հազար եւ մէկ օր Արեւելքում» (Tausend und ein Tag im Orient) երկհատոր (376+401 էջ) աշխատութիւնը, լոյս տեսած 1850-ին՝ Բերլինում:

3) «Քրիստոնէութեան մուտքը Հայաստան» վերնագրով պատմա-գրական փոքրիկ ուսումնասիրութիւնը (Die Einfuehrung des Christentums in Armenien) . լոյս տեսած Բերլինում, 1850-ին:

Վերջապէս 4) հեղինակի «Յուշեր իմ կեանքից» (Erinnerungen aus meinem Leben.) երկհատոր ինքնակենսագրական աշխատասիրութիւնը, լոյս տեսած Բերլինում 1888 թուին, որի առաջին հատորի մէջ կարեւոր նիւթեր ենք գտնում Կովկասի եւ Հայաստանի մասին:

Ահա այս վերջին գրուածքները, իւրաքանչիւրը իր տեղում եւ իր մարդի մէջ, վերին